ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<03>> նոյեմբերի 2011թ. N 93

Ք.Եղեգնաձոր

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011Թ.-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ<<ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ>>ԾՐԱԳՐՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ՄԱՐԶԻ<<ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2011թ.-ի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի առաջին ենթակետով և ՀՀ Նախագահի 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13.10.2011թ.-ի թիվ 1505-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. <<Հայաստանի Հանրապետության 2011թ.-ի պետական բյուջեի մասին>>ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանին<<Հանրակրթական ուսուցում>>09.01.02.01,09.02.01.02 և 09.02.02.02 ծրագրերով հատկացված 1539989.7 հազ.դրամ գումարը բաշխել<<Հանրակրթական ուսումնական հաստատություն>>պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև ըստ մարզպետի կողմից հաստատված N 1 բաշխման ցուցակի՝համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել մարզի<<Հանրակրթական ուսումնական հաստատություն>>պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին հատկացված գումարի շրջանակներում կազմել ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախահաշիվներ և ներկայացնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության համաձայնեցմանը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի վրա:

Ս.ԲԱԳՐԱՏՅԱՆ